ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Լուսակունք համայնքի ղեկավարին՝

1) պահպանել համայնքի ավագանու նիստերի գումարման <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարբերականությունը.
2) <<ՏԻՄ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի համաձայն յոթնօրյա ժամկետում մարզպետարան առաքել համայնքի ավագանու որոշումները.
3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջների համապատասխան ենթարկել պետական գրանցման.
4) քննարկել համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից հանելու կամ կրտսեր պաշտոնների խմբում ընդգրկելու նպատակահարմարության հարցը.
5) մշակել, ավագանու նիստում հաստատել և պետական գրանցումից հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համակարգման ներհամայնքային կանոնները.
6) համայնքային սեփականության հողատեսքերի վարձակալության համար տալ հայտարարություններ, իսկ վարձակալություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան.
7) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
8) միջոցներ ձեռնարկել գնումների մասով տեղ գտած որոշակի թերությունների վերացման ուղղությամբ.
9) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ